ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՈԿՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մտորելով այնպիսի կարևոր ամսաթվերի շուրջ, ինչպիսիք են Խաղաղության միջազգային օրը և Հայաստանի անկախության օրը սեպտեմբերի 21-ին՝ մենք մտաբերում ենք ազատության, արժանապատվության և խաղաղության համընդհանուր արժեքները: Այս տարի ևս մեկ կարևոր ամսաթիվ կա: Սեպտեմբերի 27-ին լրանում է Արցախից հայերի զանգվածային տեղահանման օրերին Ադրբեջանի իշխանությունների կողմից Ռուբեն Վարդանյանի անօրինական կալանավորման երկու տարին:

Ավելի քան 30 տարի Ռուբենն իր կյանքը նվիրել է համայնքների ամրապնդմանը: Նրա գործունեությունը, ներառյալ Հայաստանում առաջին միջազգային դպրոց-պանսիոն UWC Դիլիջանը, Ավրորա մարդասիրական նախաձեռնությունը, որը մեծարում է մարդասիրական հերոսներին, Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամը, Տաթևի վերածնունդը, Դիլիջանի զարգացման ծրագիրը և այլն, մարմնավորում են անկախ Հայաստանի կենսունակությունը:

Այս համատեքստում Դիլիջանում Ռուբենի նախաձեռնած նոր եկեղեցու շինարարության ծրագիրն առանձնահատուկ նշանակություն ունի: Այս տաճարը կդառնա հավատքի, տոկունության և խաղաղության հավերժական հույսի խորհրդանիշ: Այն ավելին է, քան պարզապես աղոթքի վայր: Այն դառնալու է միասնության խորհրդանիշ, որն արտացոլում է Ռուբենի դավանած սկզբունքը՝. մարդկանց համախմբել և հենք ստեղծել ապագա սերունդների համար:

«Ռուբենին անսահման ուժ է տալիս այն փաստը, որ եկեղեցու շինարարությունը շարունակվում է՝ չնայած իր կալանավորմանը: Ռուբենի և իմ անունից մեր անկեղծ երախտագիտությունն եմ հայտնում բոլորին, ովքեր աջակցել են մեր ընտանիքին այս դժվարին ժամանակահատվածում»:

Վերոնիկա Զոնաբենդ
Ռուբեն Վարդանյանի կինը

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ռուբենի բացակայության ընթացքում էլ վճռական ենք տրամադրված. շարունակելու ենք Դիլիջանի եկեղեցու շինարարությունը: Կայուն առաջընթացը հնարավոր է դարձել ընկերների և նվիրատուների աջակցության շնորհիվ:

Արթուր Ամիրխանյան
Եկեղեցու շինարարության ծրագրի ղեկավար

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում բոլոր այն աջակիցներին, ովքեր միացել են եկեղեցու կառուցման ծրագրին: Այս նախաձեռնությունը հնարավոր չէր լինի առանց ձեր առատաձեռն նվիրատվությունների: Մեր հիմնադիր բարերարներն են Ռուբեն Վարդանյանը և Վերոնիկա Զոնաբենդը, Նուբար և Աննա Աֆեյանները:

Հատուկ շնորհակալ ենք Դիլիջանից, Հայաստանի և աշխարհի այլ հատվածներից ավելի քան 1000 անհատ և կորպորատիվ նվիրատուներին, ովքեր օգնել են այս ծրագրին:

Դուք կարող եք դիտել նվիրատուների և կազմակերպությունների ամբողջական ցանկը Դիլիջանի զարգացման հիմնադրամի էջում:

🔗 ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԸ

ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Լուսանկարում՝ Դիլիջանի կառուցվող եկեղեցին
2025թ. սեպտեմբերի 22

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 6 550 000 ԱՄՆ դոլար

- Կապիտալ շինարարություն՝ 80%
- Նախագծում և տեխնիկական վերահսկողություն՝ 3%
- Հետազոտություններ և լաբորատոր աշխատանքներ՝ 3%
- Վարչական ծախսեր՝ 5%
- Տարածքի բարեկարգում և ներքին հարդարանք՝ 4%
- Պահուստային ֆոնդ՝ 5%

Ֆինանսավորման պլան

- Ծրագրի նախատեսված ավարտը՝ 2028թ.
- Շինարարությունն իրականացված է 60%-ով
- Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 6 550 000 ԱՄՆ դոլար
- Արված նվիրատվություններ՝ 3 255 000 ԱՄՆ դոլար
- Պակասող գումար 3 295 000 ԱՄՆ դոլար

Հիմնադիր բարերարներ

- Ռուբեն Վարդանյան և Վերոնիկա Զոնաբենդ
- Նուբար և Աննա Աֆեյաններ

«Հայաստանում և արտերկրում բազմաթիվ եկեղեցիներ եմ վերականգնել և կառուցել. շնորհակալ եմ Դիլիջանում գրեթե մեկ դար ձգված դադարից հետո առաջին եկեղեցու կառուցման հեղինակային վերահսկողությունն իրականացնելու հնարավորության համար: Ռուբեն Վարդանյանի տեսլականը ամբողջանում է մեր թիմի նվիրված աշխատանքի շնորհիվ »:

Ամիրան Բադիշյան
Ծրագրի ճարտարապետ



Այս կենսական կարևորության նախագիծն ավարտելու համար անհրաժեշտ է ևս 3,295,000 դոլար, ուստի մենք խնդրում ենք ձեր շարունակական աջակցությունը: Յուրաքանչյուր նվիրատվություն՝ անկախ չափից, օգնում է մեզ շարունակել հույսի և խաղաղության այս խորհրդանիշը կառուցումը:

Noah's Children

Մեր գործընկեր **«Նոյան զավակներ» հիմնադրամը** կոչ է անում նվիրաբերել եկեղեցու կառուցմանը՝ միանալով **«Իմ ճանապարհը» հարթակում ստեղծված արշավին:**

«Հանձն ենք առել կրկնապատկել եկեղեցու կառուցմանն ուղղված նվիրատվությունները՝ կատարված www.mywayfund.com կայքի միջոցով: Որպես Ռուբեն Վարդանյանի նախաձեռնություններն աջակցած բարերար՝ հավատում ենք դրանց վերափոխիչ բնույթին և ցանկանում ենք ուժերի ներածին չափով նպաստել Հայաստանի զարգացմանը»:

«Նոյան զավակներ» հիմնադրամը ստեղծվել է մի խումբ համախոհների կողմից, ովքեր ունեն ընդհանուր առաքելություն՝ աջակցել մշակույթին, գիտությանը և ամրապնդել համագործակցությունը զարգացող երկրներում, մասնավորապես՝ Հայաստանում և ամբողջ աշխարհի հայ երիտասարդների շրջանակներում: Հիմնադրամը Կալիֆորնիայում գրանցված ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնականում գործունեություն է ծավալում Հայաստանում և Միացյալ Նահանգներում:

🔗 ՄԻԱՑԻՐ ԱՐԾԱՎԻՆ

Կարող եք նաև նվիրաբերել Դիլիջանի զարգացման հիմնադրամի կայքի միջոցով, որը կյանքի է կոչում շինարարական նախագիծը:

🔗 ՆՎԻՐԱԲԵՐԻՐ